 վորոշող հողով գործածեցեք հետևյալ գոյականները:

Պիոներ, տրակտոր, Վազեն, Հայկ, ուսուցչուհի, ա-
 շակերտուհի, ծիծեռնակ, սոխակ:

XII. ՀՈՂՈՎՈՒՄ

Գոյական անվան պաշտոնը նախադասության մեջ
 փոխվելիս փոխվում է և նրա վերջավորությունը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 80: Վորոշեցեք, թե ամեն մի նա-
 խադասության մեջ ինչ անգամ է աշակերտ գոյականը,
 ինչ հարցի յե պատասխանում:


Աշակերտը գիրք է կարդում: Այդ աշակերտի գիրքը
 հետաքրքրական է: Աշակերտին այդ գիրքը տվել է ուսու-
 ցիչը: Ուսուցիչը սիրում է այդ աշակերտին: Ուսուցիչն
 աշակերտից դաս է հարցնում: Նա հպարտանում է իր ջա-
 նասեր աշակերտով: Իր աշակերտի մեջ ուսուցիչը տես-
 նում է սեր գեպի ընթերցանությունը:

Գոյականի վերջավորության փոփոխությունը կոչ-
 վում է հոլովում:

Գոյական անվան ամեն մի ձև կոչվում է հոլով:

ՎՍՐԺՈՒԹՅՈՒՆ 81: Արտագրեցէք աւակերս բառի
 քօլար ձեերը՝ հոլովները իբար սակ՝ յուրաքանչյուրի դի-
 ճաց գրելով նաև հարցր:

ա) Ուղղական հոլով



Աշակերարը (նվ) կարդում
 է գիրք

Աւակերսը բառը յենթակա յե

Բաժակը բառը յենթակա յե

Աւակերսը և բաժակը գոյական անունները զրված են
 ուղղական հոլովով:

Բաժակը (ինչը) չիքն է

Գոյական անվան ուղղական հոլովը ցույց է
 տալիս նախադասութեան յենթական:

Ուղղական հոլովը պատասխանում է Ի՞նչ կամ
 Ի՞նչ հարցին:

ՎՍՐԺՈՒԹՅՈՒՆ 82: Գտէք ուղղական հոլովով զրված
 գոյական անունները:

Ձմեռն անցալ:


Յեկավ գարուն:

Ձյունը հալվեց:

Լցվեց առուն:

ՎՍՐԺՈՒԹՅՈՒՆ 83: Ուղղական հոլովով գործածե-
 ցէք պիտներ, գես, դպրոց գոյականները:

բ) Սեռական հոլով



Աշակերտի (նւմ) պալու-
 սակը կախված է պատին:

Բաժակի (ինչի) ստվերն
 ընկած է սեղանին:

Աւակերտի բառը յենթակայի լրացում է, ցույց է տալիս պատկանելութուն, այսինքն՝ մեւ պայուսակը:

Բաժակի բառը յենթակայի լրացում է, ցույց է տալիս պատկանելութուն, այսինքն՝ ինչի՞ սավերը:

Աւակերտի և բաժակի գոյական անունները գրված են սեռական հոլովով:

Գոյական անվան սեռական հոլովը ցույց է տալիս մի ուրիշ առարկայի պատկանելութուն:

Սեռական հոլովը պատասխանում է ո՞ւմ կամ ինչի՞ (ինչե՞րի), հարցերին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 84: Անգիր սովորեցեք և վորոշեցեք սեռական հոլովով գրված գոյականները:

ՍՏԱԼԻՆ ՋԱՆ

Մեր լեռնային աղբյուրների

հարկաչափու ջուրը քեզ,

Ծաղկածիծաղ բլուրների

Անմահական բույրը քեզ:

Մեր գաշտերի հազարերանգ

Ծաղիկների փունջը քեզ



Յե՛վ անթառամ պարտեզների
Բուրումնալից վարդը քեզ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 85: Կադմեցեք նախադասութիւններ և սեռական հոլովով գործածեցեք հետևյալ բառերը՝ պիտներ, զեռ, դպրոց:

գ) Տրական հոլով



Ուսուցիչը գիրքը տալիս է
աշակերտին (սևմ):

Հասմիկը մոտենում է
բաժակին (խնչին):


Աւակերտին բառը ստորոգյալի լրացում է, ցույց է
տալիս այն առարկան, վորին հանգում է յենթակայի
գուժողությունը, վորին մի բան է տալիս յենթական:
Բաժակին բառը ստորոգյալի լրացում է, ցույց է տալիս
այն առարկան, վորին հանգում է յենթակայի գոր-
ծողությունը, վորին մոտենում է յենթական:

Աւակերտին և բաժակին բառերը զրված են տրական հոլովով:

Գոյական անվան տրական հոլովը ցույց է տալիս,
թե ո՞ւմ կամ ինչի՞ն է հանգում յենթակայի գործո-
ղությունը:

Տրական հոլովը պատասխանում է ո՞ւմ կամ ին-
չի՞ն (ինչերին) հարցերին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 86. Կարգացքը և դաեր տրական
հոլովով գործածված գոյական անունները:



Ձկնիկ, լո՞ղ տուր, լո՞ղ արա,
Դրսի վորսը թնո՞ղ արա,
Ի՞ջիբ ջրի հատակը,
Մինչև անցնի վտանգը:
Տես, փորձանք կա քո գլխին,
Մի լավ մտիկ յերեխին,
Վորդ է խփել իր կարթին,
Չմոտենաս եգ վորդին:

(Խնկո-Ապեր)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 87. Կազմեցեք նախադասություն-
ներ և տրական հոլովով գործածեցեք հետևյալ բառերը՝
Պիոներ, գետ, դպրոց:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 88: Արտագրեցէք և ընդգծեցէք արտական հոլովով զըզամ գոյական անունները:

ԱՐԵՎԻ ՀՐԱՄԱՆԸ

Գարնանային մի սիրուն առափոտ արևը բարձրացավ ու առց առաղերին.

— Իե, սիրուն աստղեր, յերկնքի ճրագներ, հիմա գրնացէք ու զիշերը լեկեք:


Ծաղիկներին ու թռչնիկներին առաց.

— Չարթնեցէք, ծաղիկներ, զարթնեցէք թռչնիկներ: Յե՛վ զարթնեցին բոլոր ծաղիկները, բոլոր թռչնիկները:

դ) Հայցական հոլով



Ուսուցիչը փաղաքում է իր աշակերտին (սև)



Համիկը վերցրեց բաժակը (խնչը)

Աւակերսին բառը ստորոգյալի լրացում է, ցույց է տալիս այն առարկան, վորը կրում է իր վրա յենթակայի գործողությունը:

Բաժակը բառը ստորոգյալի լրացում է, վորը ցույց է տալիս այն առարկան, վորը կրում է իր վրա յենթակայի գործողությունը:

Աւակերսին և բաժակը գոյական անունները զըզամ են նայցական հոլովով:

Գոյական անվան նայցական հոլովը ցույց է տալիս յենթակայի գործողությունն իր վրա կրող առարկան:

Հայցական հոլովը պատասխանում է ո՞ւմ կամ ի՞նչ (խնչեր) հարցին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 89: Հայցական հոլովով գործածեցէք պիտներ, գեհ և դպրոց բառերը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 90: Կարգացէք և գտէք հայցական հոլովով գործածված գոյական անունները:

Վորոշեցէք թե ի՞նչ հարցի յեն պատասխանում:



ՉՈՐՍ ՅԵՂԱՆԱԿ

Թե գարուն է նաշ-նախշուն, Նա ինչէր է մեզ բաշխում.

— Ծիւ ու ծաղիկ, կանաչ խոտ
Այ ու արվան վարդ շաղոտ:

Թե ամառ ե, շոգ ամառ,
Ի՞նչ ե բերում մեզ համար.

— Յորեն, գարի ու հաճար՝
Շատ հոգսերի գեղ ու ճար:

Թե աշուն ե պտղաբեր,
Ի՞նչ ե բերում մեզ նվեր.

— Նուռ, սերկեվիլ, տանձ, խնձոր,
Դեղձ ու խաղող մեղրածոր:

Թե ձմեռ ե ցրտաշունչ,
Ի՞նչ ե թափում լուռ ու մունջ:

- Փաթիլ, փաթիլ փափուկ ձյուն՝
Արծաթի պես պսպղուն:

(Ղ. Աղայան)

Ե) Բացառական հոլով



Ուսուցիչը ծաղկափունջ ստացավ իր աշակերտից (հւսից)



Հասմիկը ջուրը թափում ե բաժակից (ինչից)

Առակերտից բառը ստորագյալի լրացում ե, ցույց ե տալիս այն առարկան, վորից սկսվում ե յենթակայի գործողությունը:

Բաժակից բառը ստորագյալի լրացում ե, ցույց ե տալիս այն առարկան, վորից սկսվում ե յենթակայի գործողությունը:

Առակերտից և բաժակից գոյականները տրված են բացառական հոլովով:

Գոյական անվան բացառական հոլովը ցույց ե տալիս այն առարկան, վորից սկսվում ե յենթակայի գործողությունը:

Բացառական հոլովը պատասխանում ե ումի՞ց, կամ ինչի՞ց (ինչերի՞ց) հարցին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 91: Բացառական հոլովով գործածեցեք պիոներ, գետ, դպրոց բառերը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 92: Կարդացեք և գտեք բացառական հոլովով գործածվող գոյականները: Վերոշեցեք, թե ի՞նչ հարցի յեն պատասխանում:

Շունը կանչեց փխիկին:
Փխոն բռնեց շնիկից,
Շունը բռնեց թոռնիկից,
Թոռը բռնեց տատիկից,
Տատը բռնեց պապիկից,
Պապը բռնեց շաղգամից,
Ու հինգ հոգով միասին
Եղ շաղգամը քաշեցին:



Բայց շագգամը խոր հողում
Ամուր մնաց իր տեղում:

գ) Գործիական հոլով



Ուսուցիչը հպարտանում
է իր գերազանցիկ աշա-
կերտով (մւմով)

Հասմիկը բաժակով (ին-
չով) ջուր է խմում:

Աւակներով բառը ստորագյալի լրացում է, ցույց է տալիս
այն առարկան, վորը յենթակայի գործողության մի-
ջոցն է:

Բաժակով բառը ստորագյալի լրացում է, ցույց է տալիս
այն առարկան, վորը յենթակայի գործողության մի-
ջոցն է:

Աւակներով և բաժակով գոյական անունները զրված են
գործիական հոլովով:

Գոյական անվան գործիական հոլովը ցույց է
տալիս յենթակայի գործողության միջոցը:
Գործիական հոլովը պատասխանում է ո՞ւմով
կամ ինչո՞վ (ինչե՞րով) հարցին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 93: Կազմեցէք նախադասություն-
ներ և գործիական հոլովով գործածեցէք պիտուներ, գէտ և
դպրոց գոյականները:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 94: Կարդացէք և գտնէք գործիական
հոլովով գործածված գոյականները:



Ծ Ա Ղ Ի Կ

Յես արեվի ջինջ շողերով,
Ջերմ շողերով եմ բացվել,
Արշալույսի մարուր ցողով,
Պայծառ շողով լվացվել:



ՄԱՅԻՍՅՈՆ ՈՐ

Ի՞նչ անուշ է, ջան,
կյանքը մայիսյան
Իր վառ արևով,
Իր լավ սրերով:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆ 95: Անգիր սովորեցեք:

Գտեք գործիական հոլովով գործածված գոյականները.
Ի՞նչ հարցի յե՛ն պատասխանում նրանք:

ՆՈՅՆՄԲԵՐԻՆ

Գարնան անուշ հույսով յեկար
Նույնմբեր, դու հույզով յեկար.
Սալիներ ՄԷժ քեզ կյանք տվեց,
Նրա պայծառ լույսով յեկար:



Հույսով յեկար, հույզով յեկար,
Նրա պայծառ լույսով յեկար:
(Գ. Արսումի)

է) Ներգոյական հոլով



Աշակերտները պարապում են
գասարանում (ինչո՞ւմ)

Բաժակում (ինչո՞ւմ)
Թիթեռ կա:

Դասարանում բառը ստորոգյալի լրացում է, ցույց է տալիս այն առարկան, վորի սեջ գործում, գանվում է յենթական:

Բաժակում բառը ստորոգյալի լրացում է, ցույց է տալիս այն առարկան, վորի մեջ գանվում է յենթական:

Դասարանում և բաժակում գոյական անունները զրված են ներգոյական հոլովով:

Գոյական անվան ներգոյական հոլովը ցույց է տալիս այն առարկան, վորի մեջ յենթական մի բան անում կամ լինում է:
 Ներգոյական հոլովը պատասխանում է ինչո՞ւմ կամ ո՞ւմ մեջ հարցին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 96: Կազմեցեք նախադասություններ, ներգոյական հոլովով գործածեցեք պիոնե, գեհ, դպրոց գոյականներ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 97: Անգիր սովորեցեք, գտեք ներգոյական հոլովով գործածված գոյականները:



Բացվեց այգը արևելքում վառ ու զառ,
 Գեաի վրա լույսը հանդավ մեղմաբար:

Ծաղկանց վրա ցողն էլ իջավ դաշտերում,
 Շարժվեց հոտը սեզ ու կանաչ հանդերում:

Մարդ և կենդանի ցույց տվող գոյական անունները ներգոյական հոլով չունեն:

Իրանց ներգոյականի փոխարեն գործ է ածվում սեռական հոլովը մեջ բառի հետ, որինակ՝ աշակերտի մեջ, թռչունի մեջ, հորթի մեջ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 98: Սովորել հոլովները և նրանց համապատասխան հարցերը:

- Ուղղական — ո՞վ, ի՞նչ(ը)
- Սեռական — ո՞ւմ, ի՞նչի
- Տրական — ո՞ւմ, ի՞նչի (ն^ո)
- Հայցական — ո՞ւմ, ի՞նչ(ը)
- Բացառական — ումի՞ց, ի՞նչից
- Գործիական — ումի՞, ի՞նչով
- Ներգոյական — ում մեջ, ի՞նչում

Ո՞վ, ո՞ւմ, ումից, ումի, ո՞ւմ մեջ հարցերը տրվում են անձ ցույց տվող գոյական անուններին, իսկ ի՞նչ, ի՞նչի, ի՞նչին, ի՞նչից, ի՞նչով, ի՞նչում հարցերը տրվում են իբր ցույց տվող գոյական անուններին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 99: Արտադրեցեք և հարցերի փոխարեն զրեք առակեց բառը համապատասխան ձևով:

- (Ո՞վ) սովորում է: (Ո՞ւմ) գիրքը հին էր.
- Ուսուցիչը մի՞ նոր գիրքը տվեց (ո՞ւմ):
- Ուսուցիչը սիրում է իբր (ո՞ւմ): (Ո՞ւմից) զտն է ուսուցիչը:

Ուսուցիչը հոլարսանում է իր գերազանցիկ (սովոր)։
(Ո՞ւմ մեջ) շանսիրութիւնն կա։

Հորովման աղյուսակ 1

Թիվ	Հորով	Հարցեր	Անորոշ	Վորոշյալ
Ֆեգալի	Ուղղ.	հիվ,	աշակերտ	աշկերտը
	Սեռ.	համ,	աշակերտի	աշակերտի
	Տր.	համ,	աշակերտի	աշակերտից
	Հայց.	համ,	աշակերտ(ի)	աշակերտից
	Քաց.	համից,	աշակերտից	աշակերտից
	Գործ.	համով,	աշակերտով	աշակերտով
	Ներգ.	(համ մեջ)	(աշակերտի մեջ)	(աշակերտի մեջ)
Հոգնալի	Ուղղ.	հիվքեր,	աշակերտներ	աշակերտները
	Սեռ.	համ,	աշակերտների	աշակերտների
	Տր.	համ,	աշակերտների	աշակերտներից
	Հայց.	համ,	աշակերտներ(ի)	աշակերտներից
	Քաց.	համից,	աշակերտներից	աշակերտներից
	Գործ.	համով,	աշակերտներով	աշակերտներով
	Ներգ.	(համ մեջ)	(աշակերտների մեջ)	(աշակերտների մեջ)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 100: Նախադասութիւնն կազմելով աւակերտ բառի նման հորովեցէք ուսուցիչ, պիտոնեւ և Արամ գոյականն անունները։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 101: Արտագրեցէք և հարցերի փոխարեն դրէք բաժակ գոյականի համապատասխան ձևերը։

(Ի՞նչը) սեղանի վրա յե։ (Ի՞նչի՞) ջուրը մաքուր չե։ (Ի՞նչին) մօտենում է Արան։ Արան վերցնում է (ի՞նչը)։

Արան ջուրը թափում է (ինչից)։ Արան (ի՞նչով) ջուր է խմում։ Այժմ (ինչո՞ւմ) մաքուր ջուր կար։

Հորովման աղյուսակ 2

Թիվ	Հորով	Հարցեր	Անորոշ	Վորոշյալ
Ֆեգալի	Ուղղ.	ի՞նչ(ը)	բաժակ	բաժակը
	Սեռ.	ինչի՞	բաժակի	բաժակի
	Տր.	ինչի՞(ն)	բաժակի	բաժակին
	Հայց.	ի՞նչ(ը)	բաժակ	բաժակը
	Քաց.	ինչից	բաժակից	բաժակից
	Գործ.	ինչով	բաժակով	բաժակով
	Ներգ.	ինչում	բաժակում	բաժակում
Հոգնալի	Ուղղ.	ինչեր(ը)	բաժակներ	բաժակները
	Սեռ.	ինչերի՞	բաժակների	բաժակների
	Տր.	ինչերի՞(ն)	բաժակների	բաժակներին
	Հայց.	ինչեր(ը)	բաժակներ	բաժակներ
	Քաց.	ինչերից	բաժակներից	բաժակներից
	Գործ.	ինչերով	բաժակներով	բաժակներով
	Ներգ.	ինչերում	բաժակներում	բաժակներում

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 102: Նախադասութիւններ կազմելով բաժակ բառի նման հորովեցէք հետևյալ գոյականն անունները։

Գետ, ծով, սար, աշխատանք, Յերևան։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 103: Ուշադիր կարդացէք և վորոշեցէք ընդգծված գոյականն անունների հորովը։




Յաճ իջավ Դավիթ Մարութա սարից՝
 Տեսավ, Կողբաղին իրենց տան միջին
 Չափում է վոսկին թեզած առաջին,
 Սյուդին, Չարխաղին պարկերն են բռնել,
 Չենով Ռհանն ել շլինը ծոեթ,
 Կանգնել է հեռու, ձեռները ծոցին:
 Տեսավ, աչևեր արնով լցվեցին:
 — Վեր կաց, Կողբաղին, հեռու կանգնիր դու,
 Իմ հոր վոսկին է — յես եմ չափելու:
 Կողբաղին սասավ. — Ե՛ր, Չենով Ռհան,
 Կտաս — տուր խարչը ես ոխար տարվան.
 Թե չե՛ կգնամ, միրուքս վկա,
 Մորա Մեյիին կպատմեմ, կզա,
 Չեր Սասմա յերկիր քար ու քանդ կանի,
 Տեղը կվարի, բոսան կցանի:

— Կորեք, անգամ դուք Մորա շներ,
 Բա չեք իմացիլ դուք Սասմա ծոեթ...
 Մեռած եք կարծում դուք մեզ, թե՛ շվաք,
 Կուղեր մեր յերկիր դնեք խարջի տանի...
 Բարկացավ Դավիթ, չափը շարտեց
 Տվավ Կողբաղնի գլուխը Չարդեց:
 Չափի փորանը պատն անցավ, գնաց...
 Մինչև որս ել դեռ գնում է թուած:
 Ու յերան՝ թափած վոսկին թողեցին,
 Հայոց աշխարհից փախան գնացին
 Բաղին, Կողբաղին,
 Սյուդին, Չարխաղին:

(Ը. Թումանյան «Մասունցի Դավիթ»)

XIII. Ա.Ծ Ա.Կ Ա.Ն

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 104: Գրեցեք, թե ինչպիսի՞ առարկաներ են:



(Ձանասեր, ծուլ, մեծ, փոքր, սիրուն, սպիտակ, գիշատիչ, խորամանկ)

Ածական ե կոչվում այն բառը, Վոր ցույց ե տալիս առարկայի վորպիսութիւնը, ինչպիսի լինելը: Ածականը պատասխանում ե ինչպի՞սի, վո՞րպիսի, վ՞որ հարցերին:

Որինակ՝ (Ինչպիսի՞) մեծ, վորը, սիրուն, ջանասեր չար, զիշատիչ, սպիտակ, խորամանկ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 105: Կարգացեք և ցնւյց տվեք վորպիսութիւն կամ հասկութիւն ցույց տվող բառերը:

ԱՐԾԻՎՆ ՈՒ ԱՐՏՈՒՏԸ

Արծիվը կանգնեց սև ժայռի գլխին՝
Հանգիստ ու հպարտ նայում ե չորս զին.
Յածն ամպերը ճերմակ յողում են ձորում,
Վերևում վճիտ յեթերն ե ծորում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 106: Տրված գոյականների համար ասացեք ածականներ:

Ըստ նյութի	Ըստ ձևի	Ըստ համի
Փայտյա սեղան	կլոր գնդակ շաքար
. . . . գրչակոթ դաշտ պղպեղ
. . . . դուռ գետ խինին
. . . . ասիտ լիճ լիմոն

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 107: Արտագրեցեք ածականները և ցույց տվեք, թե ի՞նչպիսի հարցերի յեն պատասխանում:

ԾԱՂԻԿ ՅԵՎ ՄԵՂՈՒ

Ծաղիկ. — Պատիկ մեղու,
Ճստիկ մեղու,

Աշխատասեր ու արի,
Ո՞ւր ես տանում,
Ի՞նչ ես անում
Փոշին դու իմ թերթերի:



Մեղու. — Կապույտ ծաղիկ, նուրբ ու նախշուն,

Իացված գարնան հովի հետ
Յես քո հյուժից մեղր եմ քաշում
Համով, հոտով բուրավետ:
Առավոտից մինչ ուշ գիշեր
Շրջում եմ դաշտ ու այգի,
Չե՞ վոր յես ել անդամ եմ ժիր
Մեր համերաշխ համայնքի:

(Մ. Կորյուն)



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 108: Արտագրեցեք և ընդգծեցեք ածականները:

ԱՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ

Աչքերդ կապույտ յեթերի նման
Յե՛վ հողիդ շուշան,
Սիրդա խորունկ ծով, ազնիվ, աննաման,
Ընկեր Շահումյան:

Ձայնդ զանգագի վսեմ մի դողանջ,
 Թափանցել զհտեր
 Յեվ վողեվորել շեշտովն իր սքանչ
 Վհատած սրտեր:
 Խոսքդ չեր լոկ խոսք, այլ պատգամ հզոր,
 Կայծակնող ու վառ,
 Թշնամիներդ են մինչև այսօր
 Քեզնից դողահար:

(Հ. Հակոբյան)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 109: Կարգացեք, կետերի տեղը հա-
 մապատասխան ամականներ զնելով:

Հ Ո Կ Տ Ե Մ Բ Ե Ր

Հեյ ջան (Ինչպիսի) Հոկտեմբեր,
 (Ինչպիսի) ամիս խնդաբեր,
 Մանուկներից վողջուն քեզ,
 (Ինչպիսի) վարդերի փունջը քեզ:
 (Կարմիր, պայծառ, ալ)

XIV. Բ Ա Ռ Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ա) Նույնանիւ բառեր

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 110: Արտագրեցեք հետևյալ բառերը
 այնպես, զոր միեվնույն իմաստն ունեցող բառերը իրար
 հաջորդեն:

Այտ, շրթունք, մազ, պատուհան, թուշ, շուրթ, հեր,
 յերես, վարս, լուսամուտ:

Իմաստով նույն բառերը կոչվում են նույնանիւ
 բառեր:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 111: Կետերի տեղը դրեք միեվնույն
 իմաստն ունեցող բառեր:

Գնալ վաճառել վիզ անիվ . . .
 յերկյուղ ծիա
 (յերթալ, ծախել, ալ, պարանոց, վախ, ճնճողուկ)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 112: Գտեք նույնանիւ գոյականներ
 և արտագրեցեք:

Լեռ աքլոր թուր
 պատուհան ծամ մարտ

բ) Համանիւ բառեր

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 113: Արտագրեցեք իմաստով իրար
 մոտ բառերը հաջորդաբար:

Շինել, սքանչանալ, կառուցել, հիանալ, վերջ, մութ,
 խավար, վախճան:

Այն բառերը, փորոնք իմաստով իրար մոտիկ են
 և գործածությամբ են տարբերվում, կոչվում են հա-
 մանիւ բառեր:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 114: Նախադասություններ կազմե-
 ցեք հետևյալ համանիւ բառերով:

Հեծնել, նստել, Վոհմակ, յերամ, հոտ, նախիր,
 Բղխել, հոսել, Խայթել, կծել, Փակել, ծածկել, կողպել

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 115: Յնչց ափեք, թե հետևյալ համա-
նիշ բառերն ինչպի՞սի պարագաներում են գործածվում:

Զուլյալ, մաքուր, պարզ,
Փայլել, պսպղալ, շողշողալ.

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 116: Ի՞նչ արբերություն կա հետև-
յալ համանիշ բառերի միջև:

Զեփյուռ, քամի, հով, հողմ.
Մեծ, հսկա, ահագին, վիթխարի:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 117: Արտագրեցեք հետևյալ բառերը,
դնելով նրանց համանիւնները:

Լրագիր, կռիվ, թռչել, նուրբ, հիվանդ, անհետանալ.
(Տկար, թերթ, պատերազմ, սավառնել, ճախրել,
քնքույշ, կորչել):

զ) Համանուն բառեր

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 118: Արտագրեցեք հետևյալ նախա-
դասությունները և ընդգծեցեք այն բառերը վորոնք միեվ-
նույն գրությունն ունեն:

Կոլանտեստիթյան վոչխարի հոտը բաղկացած է մի
քանի հազար գլուխ վոչխարներից:

Մեք լեռների ծաղիկների հոտը քաղցր է ու անուշ:
Հայրենիքի սերը վոչնչով չեն վոխարինի:
Կաթի սերը համով է:

Այն բառերը վորոնք իմաստով միանգամայն
սարբեռ են, իսկ գրությամբ՝ նման, կոչվում են հա-
մանուն բառեր:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 119: Ինքներդ ասացեք մի քանի հա-
մանուն բառեր և գրեցեք նրանց նշանակությունը:

Որինակ՝ այր = մարդ, քարայր,
Փող = դրամ, նվագելու գործիք, խողովակ:

դ) Հականիւ բառեր

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 120: Արտագրեցեք հետևյալ վարժու-
թյունը և ընդգծեցեք իրար հակառակ իմաստ ունեցող
բառերը:

Բուրժուական յերկիրներում բանվորներն ապրում են
մութ, ցուրտ և կեղտոտ բնակարաններում: Իսկ մեզ մոտ՝
խորհրդային յերկրում բանվորներն ապրում են մաքուր,
ուաք և լուսավոր բնակարաններում:

Իմաստով միանգամայն միմյանց հակադիր բա-
ռերը կոչվում են հականիւ բառեր:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 121: Արտագրեցեք և կետերի տեղ
դրեք իրար հակառակ իմաստ ունեցող գոյականները:

Գիշեր , մուտք , մաքրություն ,
Լույս, , պատերազմ , քարություն ,
(ցերեկ, յելք, կեղտոտություն, մութ, չարություն, խաղա-
ղություն)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 122: Գտեք հականիւ բառեր և ար-
տագրե՛ք:

Վնաս, սկիզբ, առողջություն, ծուլություն, ծերություն,
սպիտակ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 123: Արտագրեցեք և միմյանց մոտ
դասավորեցեք հականիշ բառերը:

Կարճ, հաստ, յերկար, բարակ, մոտիկ, դանդաղ, հե-
ռու, արագ, լավ, գեղեցիկ, տգեղ, վատ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 124: Վերոհիշյալ բառերի ոգնությամբ կազմեցէք նախադասություններ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 125: Արտագրեցէք և ցույց տվէք, թե ամեն մի նախադասության մեջ ի՞նչ իմաստով է գործածվում սուր բառը:

- 1 Գեղամը սուր դանակ ունի (իսկական իմաստով):
- 2 Մարգոն սուր հիշողություն ունի:
- 3 Սուր լեզու ունի Հակոբը:

Միեվնույն բառը տեղին նայելով կարող է հաճախ մի քանի նշանակություն ունենալ, տարբեր առումներով գործածվել:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 126: Կարգացէք հետևյալ վարժությունը և ցույց տվէք բառերի առումները:

Պողպատակուռ հերոսները պահպանում են Սոցիալիստական Հայրենիքի սահմանները: Մեր յերկաթաթև բազկները բուրբից արագ, բուրբից բարձր են թռչում: Սովորեցէք մտքով հեռու սավառներ, ձեր գլուխը չծուրք վոչ մի դժվարության առաջ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 127: Հետևյալ բառերը գործածեցէք տարբեր նախադասությունների մեջ զանազան առումներով:

Հստակ, պարզ, հասուն, փափկ, ծաղիկ, վառ, դալար:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 128: Ինքներդ ասացէք բառեր և գործածեցէ՛ք տարբեր նախադասությունների մեջ զանազան առումներով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 129: Հետևյալ որինակի մեջ ցույց տվե՛ք միևնույն բառը բ՞ուն, բե՞ փոխաբերական իմաստով և գործածված:

Փայլուն աստղ.	Ծանր քար.
Փայլուն միտք.	Ծանր խոսք.
Մայլի ակ.	Խակ խնձոր.
Մատանու ակ.	Խակ միտքը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 130: Արագրեցէ՛ք և ընդգծեցէ՛ք փոխաբերական իմաստով գործածված բառերը:

Ծաղկում է ծառը.	Ծաղկում է կոլտնտեսությունը.
Պողպատյա ձող.	Պողպատյա կամք.
Աննկուն փայտ.	Աննկուն կամք.

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 131: Ինքներդ մտածեցէ՛ք համեմատություններ և գրի առէք հետևյալ որինակների ձևով:

Խորհրդային Միությունը վորպես անառիկ մի բերդ անաստան է և ամուր: Գրանիտի նման ամուր են Խորհրդային Հայրենիքի սահմանները:

Արծվի պես սուր տեսողություն ունի Մինասը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 132: Լրացրե՛ք հիշյալ նախադասությունները՝ համապատասխան համեմատություններ զնելով:

. . . . վորպես ձյուն: վորպես լեռ:
ինչպես հողմ ինչպես լույս:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 133: Կարգացէ՛ք և ցույց տվե՛ք պակերավոր արտահայտություններ:



Մ Ա Ր Տ

Ա՛խ այսպէս ել գիժ ամիս,
 Մարդու հանգիստ չի տալիս:
 Այսոր ուրախ որ կանի,
 Վազը՝ անձրև ու քամի,
 Առավոտը՝ պայծառ ող,
 Կեսորը մութ ու ամպոտ:
 Մին հագնում է սպիտակ,
 Մին կանաչին է տալիս,
 Մի որ ցուրտ է, մի որ տաք,
 Մին խնդում է, մին լալիս...
 Ա՛խ, այսպէս ել գիժ ամիս:

(Հ. Թումանյան)

XV. ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հետևյալ բառերում ը-ից հետո գրվում է ն, բայց չի արտասանվում կամ թույլ է արտասանվում.

Աշխարհ	ճանապարհ
խորհուրդ	խոնարհ
արհամարհել	շնորհք

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 134: Կազմեցեք նախադասություններ և գործածեցեք վերևում բերված բառերը:

Որինակ՝ Աշխարհի մեկ վեցերորդ մասում խորհրդային յերկիրն է:

Ձ—Ձ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 135: Սովորեցեք հետևյալ բառերը, վորոնց մեջ գրվում է ջ, բայց արտասանվում է չ:

Արտագրեցեք այբբենական կարգով:

Արջ	յերջանիկ	զղջալ	առողջ
արջառ.	վերջ	յեղջուր	յեղջերու.
վորջ	առաջ	չղջիկ	
թրջել	աջ	վողջույն	
	հաջել	աղջիկ	
	մեջ	միջակետ	

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 135ա: Կազմեցեք նախադասություններ, գործածելով վերևում բերված բառերը.

Որինակ.

Մեր դասարանում կան տղաներ և աղջիկներ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 136: Սովորեցեք հետևյալ բառերը, վորոնց մեջ գրվում է ձ, բայց արտասանվում է ց:

Արտագրեցեք այբբենական կարգով:

Բարձ	փորձ	համարձակ
աշխատավարձ	դերձակ	դեղձ
արձագանք	խուրձ	դաղձ
դարձյալ	փորձառու	
արձակ	ոձ	
համարձակ		
արձակուրդ		
բարձր	փորձանք	

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 137: Նախագասությունների մեջ գործածեցեք վերևի բառերը:

Ուրիմակ. Ամառները մենք արձակուրդ ենք ունենում:

Գ — Թ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 138: Սովորեցեք հետևյալ բառերը, վորոնց մեջ գրվում է դ, բայց արտասանվում է ք:

Արտագրեցեք այբբենական կարգով:

Արդեն	ող	Թակարդ
բարդ,		կրկորդ
բերդ	Աղամ	վորսորդ
զարդ	վարդ	ճանապարհորդ
յերգում	կենդանի	յերբորդ
լարդ		չորբորդ
կարդալ	խնդիր	հինգերորդ և այլն
մարդ	Թաղեվոս	
վարդ	դադար	

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 139: Վերևի բառերը գործածեցեք նախագասությունների մեջ:

Որինակ՝ Խորհրդային ժողովուրդն ունի անթիվ հերոսներ:

Գ — Ք

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 140: Սովորեցեք հետևյալ բառերը, վորոնց մեջ գրվում է ց, բայց արտասանվում է ք:

Արտագրեցեք այբբենական կարգով:

Թարգմանել	հազնել	Մարգարիտ
յերգ	հողնել	
կարգ	ողնել	ողուտ
պարգև	զուգվել	կարագ
ավագ	մարագ	

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 141: Վերևի բառերը գործածեցեք նախագասության մեջ:

Որինակ՝ Ավագը հագել է նոր կոշիկ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 142: Արտագրեցեք վոտանավորը և գծերի տեղը դրեք համապատասխան տառը:

Գ Ա Ր Ո Ւ Ն

Ձու—վել է կրկին

Անտառ ու այ—ի,

Վշտում է ուժգին

Ձուրը գետակի:

Հավ—երը սիրուն

կազմել են համեր—:

Արտում ու դաշտում

Հորովել ու յեր—:

Թիթեոններն ուրախ
 Թուշում են դես-դեն...
 Ջան, տեսքիդ մատաղ,
 Գարուն է ար — են:

(Ն. Հայրապ.)

Ղ — Խ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 143: Սովորեցեք հետևյալ բառերը,
 վորոնց մեջ գրվում է ղ, արտասանվում է խ:

աղբ	
աղքատ	մաղձ
թուղթ	վողբ
հաղթել	վողջ
խեղդել	ուղտ
ղեղձ	կեղտ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 144: նախադասությունների մեջ գործածեցեք վերեվի բառերը.

Որինակ՝ Մեր Խորհրդային Հայրենիքում հաղթանակել է սոցիալիզմը:

Յերկհնչյուններ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 145: Արտագրեցեք և այ, ոյ, ույ, յա, յո, յու, յե, իա յերկհնչյունների տակ գիծ քաշեցեք:

ԱՐԵՎՆ ՈՒ ԾԻԱԾԱՆԸ

Անձրևից հետո ծագեց արևն ու ծիածան կապեց:

— Նայիր ինձ, քեզանից գեղեցիկ եմ, — ասավ ծիածանն արևին, — տես, քանի գույն ունեմ. կանաչ, կարմիր, կապույտ, դեղին...

Բայց գիտե՞ս վոր յես եմ քեզ այդքան գույն արձվողը, — ասաց արևը:

— Դ՞նու... սուտ է, — ժպտաց ծիածանը:

— Սնուտ է, — ասաց արևն ու մտավ ամպի տակ:

Արևն ամպի տակ մտավ թե չէ, ծիածանն ել անհե՛տացավ:

ի ձայնավորից հետո յ չի գրվում. մյուս ձայնավորներից հետո գրվում է, յեթե լավում է. որինակ՝ ծիածան, գոյական:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 146: Սովորեցեք հետևյալ բառերի՝ գրությունը:

Արտագրեցեք այբբենական կարգով:

միայն		
միասին	կրիա	քիմիա
պիոններ	Մարիամ	Անգլիա
միություն	ձիավոր	պրոլետարիատ
հիանալի		
թիակ	լիություն	
ծիածան	սոցիալիզմ	
Դանիել		

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 147: Վերևի բառերը գործածեցեք նախադասության մեջ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 148: Սովորեցեք հետեւյալ բառերի գրությունը:

Արտագրեցեք այբբենական կարգով:

Մյուս, հույս, լույս, փայտյա, յեղբայր, բույր, համբույր, արյուն, բյուր, լոթ, հայր, գոյական, քույր, համաձայն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 149: Արտագրեցեք այն բառերը, վորոնք ունեն այ, ոյ, ույ, յա, յե, յո, իա յերկհնչյունները:

ՄԱՐԻԱ ԳԵՄՁԵՆԿՈՆ

Մարիա Դեմչենկոն ծնվել է չքավոր ընտանիքում: Նրա հայրն այնքան աղքատ է լինում, լուցկի անգամ չեն ունենում վառարանը վառելու համար: Յեվ լուցկին ինչ է, այն էլ Դեմչենկոյի ծնողները խնդրում էին հարևաններից:

Յերբ դեռ Մարիան բարուրի յերեխա յեր, մայրը նրան փաթաթած իր հին շորերի մեջ դնում էր թփերի տակ, իսկ ինքը քաղհան էր անում:

Մարիան ութը տարեկան հասակում ընդունվում է դպրոց: Բայց դպրոցում մնում է միայն 2 օր: Մարիայի հայրը գյուղի կուլակներից մեկին դրամ էր պարտք: Այդ կուլակը համաձայնվում է պարտքը չուղել, յեթե Մարիան գնա նրա մոտ բատրակություն անելու:

Յեվ այդպես Մարիան զրկվեց դպրոցից: 8 տարեկան հասակում նա խնամում էր կուլակի յերեխաներին, ծանր դուլներով ջուր էր կրում, բատրակություն էր անում կուլակի տանը մեծի փոխարեն: Խորհրդային իշխանությունը փրկեց Մարիային և նրա նման հազարավորներին:

Այժմ Մարիա Դեմչենկոն Խորհրդային Միության անվանի մարզկանցից մեկն է:

ԲՈՎԱՆ ԴՍԿՈՒԹՅՈՒՆ

I. Նախադասություն	3
II. Համառոտ նախադասություն	11
III. Ընդարձակ նախադասություն	12
IV. Հարցական նախադասություն	20
V. Հրամայական նախադասություն	22
VI. Բացականչական նախադասություն	23
VII. Պատմողական նախադասություն	25
VIII Համադատ լրացումներ ունեցող նախադասություն	26
IX. Մեկից ավելի յենթակա և մեկից ավելի ստորոգյալ ունեցող նախադասություն	27
ա) Մեկից ավելի յենթակա ունեցող նախադասություն	27
բ) Մեկից ավելի ստորոգյալ ունեցող նախադասություն	29
X. Չափերտի և անշատման դժի դործածությունը	32
XI. Գոյական անուն	35
ա) Հասարակ անուններ	38
բ) Հատուկ անուններ	39
գ) Գոյականների թիվը	41
դ) Գոյականների վորոշող հոդը	43
XII. Հոլովում	45
ա) Ուղղական հոլով	46
բ) Սեռական հոլով	47
գ) Տրական հոլով	50
դ) Հայցական հոլով	52
ե) Բացառական հոլով	54
զ) Գործիական հոլով	56
է) Ներգոյական հոլով	59

XIII. Ածական	65
XIV. Բառագիտություն	68
ա) Նույնանիշ բառեր	68
բ) Համանիշ բառեր	69
գ) Համանուն բառեր	70
դ) Հականիշ բառեր	71
XV. Ուղղագրություն	75

Պատ. խմբագիր՝ Գ. Սևակ
 Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
 Սրբագրել՝ Բ. Առևկասյան

Գլավիտի լիազոր՝ Վ. 2083 Հրատ. 4797.

Պատվեր 415. Տիրած 50.000

Թուղթ 62/92. Տպագր. 5 մամ.

Մեկ մամ. 3/240 նշան.

Հանձնված է արտադրության 7 մայիսի 1939 թ.

Ստորագրված է տպագրության 11. հունիսի 1939 թ.

70

ՀՀ Ազգային գրադարան



NL0977710

4 01 1959
297
ԳԻՆԸ 1 Ռ. 80 Կ.
ԿԱԶՄԸ 50 Կ.

11

28808

А. ГАРИБЯН и С. ГАЗАРЯН
Армянский язык
Грамматика и правописание
Учебник III класса
Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.